Արձանագրություն N5
«ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23.06.2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը
Հանձնաժողովի անդամներ Ն. Ավետյանը, Գ.Մելիքսեթյանը և Ս. Ալեքսանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ջրային կոմիտեի կարիքների համար ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին Չափաբաժնում (ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն-2 պոմպակայանի մղման խողովակաշարի կառուցման աշխատանքների ձեռքբերում) ընտրված մասնակից <<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումները պատվիրատուին սահմանված ժամկետում չներկայացնելու մասին:

Հանձնաժողովի քննարկում

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.05.2022թ. թիվ 4 արձանագրության որոշման համաձայն Ընթացակարգի 1-ին Չափաբաժնում ընտրված մասնակից է համարվել <<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ն:

20.05.2022թ. հրապարակվել է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանվել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ այն է 30.05.2022թ. ներառյալ: Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը 01.06.2022թ տրամադրել է էլեկտրոնային եղանակով ընկերության էլեկտրոնային փոստին:

Ընտրված մասնակիցը պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 14.06.2022թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին և խնդրել պայմանագրի նախագծում կատարել համապատասխան փոփոխություն հիմք ընդունելով աշխատանքների կատարման նախագծային փաստաթղթերի գիրք N 1-ում նշված օրացուցային գրաֆիկը: Գրությանն ի պատասխան Ընկերությանը տեղեկացվել է, որ ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն-2 պոմպակայանի մղման խողովակաշարի կառուցման շինարարական աշխատանքների համար նախատեսված է 12 շաբաթ, նույն ժամկետն է սահմանված նաև նշված շինարարական աշխատանքների նախագծային փաստաթղթերի գիրք 1-ում:

Հանձնաժողովի նախագահ Ս. Ասրյանը նշեց, որ ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման ժամկետը նախատեսված է եղել 40 օրացուցային օր, որը հնարավորություն է տալիս մասնակիցներին լիարժեք ուսումնասիրելու հրավերը և կից նախագծային փաստաթղթերը, այդ թվում ստանալ պարզաբանումներ:

<<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ն 15.06.2022թ. N 8 գրությամբ Պատվիրատուին տեղեկացրել է, որ ներկայացնում է ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով պայմանագրի կատարման համար անհրաժեշտ բանկային երաշխիքների կրկնօրինակները և, որ Ընկերությունը նշված պայմանագիրը կստորագրի իրենց կողմից նշված փոփոխությունները կատարելուց հետո:

Հանձնաժողովը որոշեց

1. Հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.5 կետը <<Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում

որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:>> <<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ին համարել պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկված:

2. Ուժը կորցրած համարել 19.05.2022թ. թիվ 4 արձանագրության հիման վրա հրապարակված հայտարարության ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումը:

3. Համաձայն ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի Հրավերի 8.20 կետի, այն է՝ Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը՝ սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.19-րդ կետերով սահմանված ընթացակարգի կիրառմամբ, ընտրված մասնակից համարելու համար համաձայն Հրավերի 8.7 կետի ա. պարբերության ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 28.06.2022թ. ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի վարչական շենքում (նիստերի դահլիճ) Վարդանանց 13ա:

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 /նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 110 721 300 ՀՀ դրամ/ ջրատարների վերականգնման շինարարական աշխատանքներ - ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն-2 պոմպակայանի մղման խողովակաշարի կառուցման աշխատանքներ,				
1	<<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ	99 126 574	19 825 315	118 951 889
2	<<ԷՄՈՇԻՆ>> ՍՊԸ	108 147 925.6	21 629 585.1	129 777 510.7
3	<<ՇԻՆԱՐՎԵՍՏ>> ՍՊԸ	113 217 300	22 643 500	135 860 770
4	<<Քոնստրաքշն Գրուպ>> ՍՊԸ	120 833 333	24 166 667	145 000 000
5	<<Բիդեք>> ՍՊԸ	121 022 584	24 204 517	145 227 101
6	<<Մեդիսոն Էյբլ>> ՍՊԸ	131 919 495	26 383 899	158 303 394

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Նախագահ _____ Ս. Ասրյան

_____ Ն. Ավետյան

_____ Գ. Մելիքսեթյան

_____ Ս. Ալեքսանյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան